



Ո՞Չ ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՅՈՒՐԻՆԱԿԱՆ ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ

Վեոլիա Ջուր ՓԲԸ ակտիվացնում է խմելու ջրի սպառման կանոնակարգմանն ուղղված աշխատանքը, բաղկացած երկու բաղադրիչից.

- Պայքար ապօրինի ջրօգտագործման դեմ,
- Նոր համակարգերի կառուցում՝ համաձայն գործող կարգի:

Ստորել ներկայացվում է Վեոլիա Ջուր ՓԲԸ հայտարարությունը՝ իրականացվող աշխատանքների օրենսդրական հիմքերի ու բաժանորդ դառնալու համար ջրօգտագործողներին ներկայացվող պահանջների մասին:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

2017 թվականի հունիսի 1-ին ՀՀ Կառավարության կողմից ընդունվել է թիվ 658 որոշումը՝ ՀՀ Կառավարության 2004 թվականի հունվարի 22-ի թիվ 130-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և խմելու ջուրը ոռոգման նպատակով օգտագործման կարգավորման, խմելու ջրի մատակարարման համակարգերից խմելու ջրի ապօրինի սպառումը և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործումն արձանագրելու մասին:

Նշված որոշման համաձայն՝ ապօրինի սպառումը առանց լիցենզավորված անձի կողմից համապատասխան տեխնիկական պայմանների տրամադրման ջրամատակարարման և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերին ինքնակամ միացումն է:

ՀՀ Կառավարության թիվ 658 որոշմամբ սահմանվում է, որ.

- Ապօրինի միացմամբ օգտագործված ջրամատակարարման և ջրահեռացման օրական քանակները հաշվարկվում է խմելու ջրի խողովակի ներանցման թողունակությամբ՝ ջրի շարժման 1,5 մ/վրկ արագությամբ և ջրամատակարարման հրապարակված համապատասխան տևողությամբ:

- Հայտնաբերված ապօրինի միացումը ենթակա է անջատման (ջրազրկման, խցափակման)՝ ապօրինի միացում կատարած անձի հաշվին:

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 30.11.2016թ. ընդունված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին թիվ 378-Ն որոշման համաձայն՝ ջրամատակարարման և ջրահեռացման նոր համակարգը, դիմող անձի հայեցողությամբ, կառուցում է ջրամատակարարը կամ դիմող անձը: Նոր համակարգը կառուցվում է դիմող անձի հաշվին: Նոր համակարգի կառուցումը և Հայաստանի Հանրապետությանը դրա սեփականության իրավունքի անհատույց հանձնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ղիմող անձի կողմից նոր համակարգը կառուցվում է մատակարարի տրամադրած տեխնիկական պայմանների հիման վրա: Նոր համակարգի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, ղիմող անձի հայեցողությամբ, իրականացնում է մատակարարը կամ մատակարարի պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ ղիմող անձի հաշվին:

ՀՀ Կառավարության և ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումները, համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ պաշտոնական գրավոր փաստաթղթեր են, որոնցով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություններ, սահմանափակումներ կամ այլ կանոններ:

Հետևաբար, նշված որոշումները ենթակա են պարտադիր կատարման, ինչպես Վեոլիա Ջուր ընկերության, այնպես էլ բոլոր շահագրգիռ ֆիզիկական ու իրավաբանական անձանց կողմից: